ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ,10-րդ,19-րդ,22-րդ հոդվածներով, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումով՝

Երանոս համայնքի ավագանին որոշում է՝

Երանոս համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 10-ի N 10-Ն որոշմամբ հաստատված համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Երանոս համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում՝ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների (հողամասերի կատեգորիաների տրանսֆորմացիայի) առաջնահերթ (մինչև 5 տարի) ժամկետներում նախատեսված համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 05-033-0228-0015 կադաստրային ծածկագրով 0,1904 հեկտար վարելահողը հատուկ պահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասերի ցանկից փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ հեղուկ գազի լցակայան կառուցելու համար:

2. Երանոս համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում՝ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների(հողամասերի կատեգորիաների տրանսֆորմացիայի) առաջնահերթ (մինչև 5 տարի) ժամկետներում նախատեսված բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության համար 05-033-243-051 կադաստրային ծածկագրով 0,076 հեկտար և 05-033-243-050 կադաստրային ծածկագրից

0,1144 հեկտար հողամասերը փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասերի ցանկ՝ գլխավոր հատակագծով նախատեսված փոփոխությունների հավասարակշռությունը պահպանելու համար:

3. Առաջարկել Երանոս համայնքի ղեկավարին սույն որոշումը ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի միջոցով ներկայացնելու ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱՉԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐՄԱՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ